

ղեցիկ ճառերով և երգերով երբեմն երբեմն կընդմիջէին. ասոնք երեք ժամէն աւելի աւելցին. յետոյ Հռիփսիմեան Օրիորդաց զբարոյի աշակերտութիւնը իրենց ընթերցանութեան և դրամարժուութեան քննութիւններն առին: Յետոյ երբ մանր ուսմունք անուամբ Վրիտտոնէական Վարդապետութեան հարց պատասխաններն սկսան (զոր ամբողջ բերան ըրած էին), Տեղւոյս Մութասարը իւր ամբողջ ժողովականներով, սցսկնքն՝ Վատըր, Մութասէպէճի և վիճուհի քաղաքիս և զրազիրք կառավարութեան ծիշդ այս միջոցին հասան (զՅաշայն օր յառաջ հրաւիրած էի թաքրիրով). ուր յետ հարց պատասխանելոյ, տոճկերէն ճառ մը և քանի մը երգ ալ կարդացուելով Հանդէսը զոցեցինք ատենաբանութեամբ մը: Այլ բանէ օրը տեսնալով որ օրիորդաց մայրեր զըկուեցան այս դեղեցիկ հանդէսէն, զկնի Ս. պատարազի բերնք օրիորդները և ժողովուրդն ալ ամբողջ ներկայ էր, երկու սեռէսլ մեծ և փոքր, ու ամբողջ մանր ուսմունքը բերան քաղեցին: Արդ շքեղութիւնը քաղաքիս նկատմամբ խիստ շատ է և այս առաջին անգամն է որ այսպիսի հանդէս մը տեղի ունեցաւ: Ապրիլի մէջ. մեծ յոյս ունինք որ սոքա կրթեալ հայրեր և մայրեր պիտի ըլլան: Ապրիլի ապագայի համար, օտարազգիք նախանձեցան. տեղւոյս Հայկաբանութեան դասատուն Բաղիշեցի Սողոմոնեան Վրիգոր պատուելին է, որ անխոնջ կաշխատի. և երաժշտութեան դասատուն նորին աշակերտ պարոն Սամբրէն է: Չմոռանանք որ թուաբանութեան դասախօսութիւն ունինք և աշխարհագրութեան, բայց դեռահաս են ասոնց մէջ. այսչափս բաւական կը համարւիմ:

ՇԱՄԱԽԻՈՅ ՆՈՐԱԲԱՅ ԴՊՐՈՅՆ ԵՒ ՆՈՐԸՆՏԻՐ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՅ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ:

Շամախոյ վիճակին Հողեր Տեսուչ Վերապտոն Ս. Ենդրէաս Ապիսիոպոս՝ Բաղուոյ նորակառոյց եկեղեցւոյ օծման առթիւ՝ արդու տոնաբանութեամբ և յորդրանօք տեղւոյն Հայազգի ժողովրդեան ուսումնասիրական զբոսմունքները կրթութեայ շարժել, հետեւաբար սնդ ծխական դպրոց կը բանայ Հայ մանկաւոյն լուսաւորութեան և կրթութեան համար. և նորա բարեք ու արդիւնաւոր զորդացման ազագու, ժողովրդեան ընտրութեամբ՝ խառնայ ժամանակով Հոգաբարձու կը կարգէ հետեւալ 6 անձինք՝ բարեկրօն Թադէոս աւագ քահանայն Բաղուեանց, պարոնայք՝ երիցփոխան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ՝ Զաւագ Մէլքեանց, Վրիգոր Այվաղեանց, Ռաֆայէլ Պօպօլեանց, Վրիգոր Թումայեանց, Յակոբ Ապրիսեանց: Նաեւ յիշեալ Վալրոյն ինպաստ՝ արքունի դանձարանի ծառայող Հայք իւրաքանչիւր տարի երկու հարիւր արծաթ ուրլի կը խոստանան նուիրել. և երիցփոխան Պ. Զաւագն Մէլքեանց հինգ սենեակներէ բաղկացեալ իւր սեպհական տունը երկամեայ ժամանակով Վալրոյն կը յատկացնէ առանց վարձու՝ մինչև նոր դպրոցին շինուիլը եկեղեցւոյ բակին մէջ:

Ահա Զաւագ Վաթղիկոսը Հայրապետական կոնդակներով օրհնելով և զովելով Բաղուոյ Հայոց, արքունի դանձարանի հայ ծառայողաց և Պ. Զաւագայ Մէլքեանց ազգասիրական և ուսումնասիրական եռանդները և բարեպաշտ նուէրները, բարեհաճեցաւ հաստատել նորընտիր հոգաբարձուքը:

«Իզմիրի Արշալոյս Արարատեան յարգոյ լրագրին մէջ հետեւեալը կը կարդանք:

«Հաւատարիմ ազգբուրէ մի կիմանամք թէ անցեալները Վահրէի Անգղեյ ընդհանուր հիւպատոսը 40 լիւրայի արժողութեամբ հազուստ և 1000 Սպանիոյ թալէս պատրաստ դրամ յատուկ սուրհանդակով մի յուղարկեր է ի Հապէշաստան առ Վեր. Տ. Սահակ արքեպիսկոպոսն: Հագոստը՝ Ն. Սրբադնութեան և իւր ընկերացը համար է եղեր. իսկ հաղար թալէսը՝ հարկաւոր եղած երեւելի անձանց ընծայ տալու համար, որպէս զի անոնց օգնութեամբ կարող ըլլան վերագառնալու»:

Մասիս օրաթերթ, Թիւ 338:

«Արշալոյս Արարատեան պատուական լրագրին 857 թուոյն մէջ հետեւեալը կը կարդանք:

«Հնդկաստանէն կը ծանուցանեն մեզ, թէ Ս. Լըուսաղէմայ նուիրակ Արժ. Տ. Ներսէս ծայրագոյն վարդապետը յաջողեր է Վալիաթայի տնտեսական վարչութենէն (ատմինիսթրաթօր) ստանալու՝ հանգուցեալ Սանուկեան Վեորդին շատ տարիներէ ի վեր յանուն Ս. Յակոբայ աթոռոյն կտակաւ թող տըլած հրիտակին տոկոսը, որ 14,900 ռուբլի է եղեր. այսինքն 1490 անգղեական լիւրա:

Նոյն, Թիւ 362:

Ընդհանուր Վալիաթայի զիւղէն տիրացու Սելիտո ուրարակիր Ս. Արսէնեանցի նամակէն հետեւեալ բովանդակութիւնը կը քաղենք.

Յիշեալ զեղջ ուսումնասէր Սելքիսիդէս քահանայն Սանուկեան, որ Հաւիճոյ վանից դպրոցը ուսումն առած ընելով, 1862 թուականին քահանայ ձեռնադրուելէն ի վեր իւր անխոնջ ջանքը ու միայն իւր խնա-

մոց յանձնուած հոյ մանկուոյն հայերէն ընթերցանութիւն և այլն ուսուցանելու չը խնայեր, այլ և տեսնելով ցաւօք սրախ՝ եկեղեցւոյ շէնքին աւերակ վիճակը, զեղեցիկ եռանդով ոգևորուած, Հոգևոր Եղեանութեան թոյլտվութեամբ և հրամանաւ՝ կը ձեռնարկէ ի հիմանէ նոր Եկեղեցւոյ շէնութեան, զոր իւր ժողովրդին և շրջակայ կողմանց Հայկազանց արօք և օգնականութեամբ ևս սեպհական արդեամբք և անձնանուէր աշխատութեամբք յաջողեցաւ յաւարտ ածել. որոյ ս. օծման հանգէսը անցեալ դեկտեմբեր ամսոյ 5-ին 1868 թուականի կատարեցաւ Վ. Ե. Վաթողիկոսի կողմանէ նշանակված մի եպիսկոպոսի ձեռքով:

Տիրացու նամակագիրը կը յաւելու նաեւ թէ, յիշեալ բարեկրօն քահանայն տակաւին մեծ հոգս կը կրէ եկեղեցւոյ ներքին պիտոյից թերութիւնները լրացնելու. մանաւանդ՝ օր աւուր առաւել մեծ ճիգ կը զոհէ զիւղեա աղքատիկ դպրոցին ի զարգացումն և ի յառաջադիմութիւն՝ Հոյ մանկանց լուսաւորութեան համար:

Յաջորդ թուով Ն. Ն. Վախիճեանայ Մարդասիրական Ընկերութեան առ Վ. Ե. հաստատ. Վաթողիկոսն մատուցած հաշիւը կը փութամք հրատարակել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

(Շարունակութիւն)

Մենք ասացինք, որ դաստիարակութեան նպատակը է մարդու առնել ուժեղ, խելօք եւ առաքինի: Գուցէ ասողներ լինին մեզ, որ եթէ դաստիարակութեամբ կարելի է մարդուն այդ զովանի յատկութիւնքը տալ,

(*) Տես նախընթաց համարն.